

զամենեքումբք որ առ իւրեն, եւ քան զյոլովս որ յառաջ եւ յետոյ յարեւելս, գլելով յայսմ մասին զքրիստոնեայ իշխանօք՝ ընդ որս եղել նմա ունել գործ. որպէս զի երկոցուն կրօնից եւս պատմիչք՝ միաբանք գտանին ՚ի մեծարել զնա: Սակայն ածեալ զմտաւ եւ զայն՝ զի Սալահէտտին օգնակա-նութեամբ Նուրէտտինի եւ մատնութեամբ պաշտօնէից սուլտանին Եգիպ-տոսի՝ ամբարձաւ յիշխանութիւն, եւ օժանդակս ունէր զբազմաբոյլ տոհմս հաւատակաց իւրոց, զԱրաբացիս, զԵգիպտացիս, զԹուրքս եւ զԹուրքմանս եւ զՔուրդս, որք միամտութեամբ յարեալ ստուարացուցանէին զբանակս նորա. իսկ զի Լեւոն՝ սակաւաձեռն գնդաւ յաղթողանայր բազմաւորացն, եւ այն ՚ի միջի այլալեզու եւ այլաձէս ժողովրդոց Կիլիկիոյ, առաւելուն յոյժ արդիւնք սորա. եւ զարմանալի եւս հանդիսանայ մեծագործութիւնն, որով ոչ պատկառիմ գերազանցեալ քան զընդդիմակացն՝ ասեզ զնա:



208. Սալահէտտին Սուլտան.

Զի եթէ Սալահէտտին բազում ինչ մեծամեծս գործեաց, այլ ոչ գործ մի մեծ, ոչ ՚ի չգոյէ յարոյց պետութիւն նոր, ոչ օրէնսդիր կամ կրօնսուսոյց նոր երեւեցաւ, ոչ գերահռչակ յիշատակարան մի կանգնեաց եւ եթող յետ իւր. եւ եթէ բազում յաղթութիւնս կատարեաց ՚ի վերայ քրիստոնէից, եւ կալաւ գրեաթէ զամենայն վիճակս եւ զամուրս նոցին, եւ զգլխաւորն բնաւից զԵրուսաղէմ. սակայն զի՞նչ կէտ էր նպատակի նորա, եթէ ոչ՝ կամ վրէժխնդրութիւն ՚ի քրիստոնէից, կամ յաղթասիրութիւն. թող զի եւ յետ